ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 79 Ա   ք.Արտաշատ

„28„ ապրիլի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի № 46-Ն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի 369-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի 8․1 կետը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1․ 2023 թվականի հունիսի 5-ից 6-ն ընկած ժամանակահատվածում Արարատի մարզում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Ազատի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

2․ Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավար՝ ՀՀ Արարատի մարզպետ Սեդրակ Ռազմիկի Թևոնյան.

2) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Արտավազդ Անդրանիկի Նազարեթյան։

3) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ՆԳ Փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) պետ, փ/ծ փոխգնդապետ Արսեն Աշոտի Ղուկասյան:

3։ Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

1) խաղարկման խումբ՝

ա) խմբի ղեկավար՝ ՓԾ Արարատի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԿ) պետ, փ/ծ փոխգնդապետ Սուրեն Գեղամի Գալստյան։

բ) խմբի անդամներ՝

ա։ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Գագիկ Աշոտի Եփրեմյան։

բ։ ՓԾ Արարատի ՄՓՎ բնակչության պաշտպանության (այսուհետ՝ ԲՊ) բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Զավեն Ալբերտի Պողոսյան։

2) վերլուծության նախապատրաստման խումբ՝

ա) խմբի ղեկավար՝ ՓԾ Արարատի ՄՓՎ բնակչության պաշտպանության (այսուհետ՝ ԲՊ) բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Գևորգ Գառնիկի Թեմուրյան։

բ) ՓԾ Արարատի ՄՓՎ Վեդու հրշեջ-փրկարարական ջոկատի (այսուհետ՝ ՀՓՋ) հրամանատար , փ/ծ փոխգնդապետ Պարույր Գագիկի Սահակյան։

գ) խմբի անդամ՝ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխերի (այսուհետ՝ ՕՀՀ) ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Հրաչուհի Էդիկի Մարկոսյան։

3) միջնորդական խումբ՝

ա) խմբի ղեկավար՝ ՓԾ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Նահապետ Սերյոժայի Զալյան։

բ) խմբի անդամներ՝

ա։ ՓԾ Արարատի ՄՓՎ Մասիսի ՀՓՋ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Բագրատ Վանյայի Դանիելյան։

բ։ ՓԾ Արարատի ՄՓՎ Արարատի ՀՓՋ հրամանատարի պարտականությունները ժամանակավար կատարող, փ/ծ մայոր Արսեն Զարզանդի Բաբագուլյան։

գ։ ՓԾ Արարատի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Հարություն Վոլոդյայի Կարապետյան։

4) ապահովման խմբի ղեկավար՝ ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Լեոնիկ Խաչիկի Խաչատրյան։

5) գործնական միջոցառումների խումբ՝

ա) խմբի ղեկավար՝ ՔԾ Արարատի ՄՔՎ Արտաշատի ՀՔՋ, փ/ծ փոխգնդապետ Արմեն Շմավոնի Միքայելյան։

բ) խմբի անդամներ՝

ա։ ՔԾ Արարատի ՄՔՎ Վեդու ՀՔՋ հրամանատարի տեղակալ, փ/ծ կապիտան Տիգրան Վալերիի Վարդանյան։

բ։ ՔԾ Արարատի ՄՔՎ Մասիսի ՀՔՋ հրամանատարի տեղակալ, փ/ծ մայոր Գրիգոր Խաչիկի Եփրեմյան։

6) գործնական միջոցառումների ուսումնական տեղամասերի ղեկավարներ՝

ա) 1-ին ուսումնական տեղամասի (Արտաշատ համայնքի Լանջազատ բնակավայրի միջնակարգ դպրոց) ղեկավար՝ Արտաշատ համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ Հրայր Ռոբերտի Հակոբջանյան։

բ) 2-րդ ուսումնական տեղամասի (Արտաշատ համայնքի Լանջազատ բնակավայրի մարզադպրոց) ղեկավար՝ Արտաշատի ՀՔՋ հրամանատար, փ/ծ մայոր Գառնիկ Գեղամի Շահբազյան։

գ) 3-րդ ուսումնական տեղամասի (Լանջազատ բնակավայրի պոմպակայանի հարակից տարածք) ղեկավար՝ Արտաշատի ՀՔՋ խմբի պետ, փ/ծ կապիտան Հայկ Սամվելի Եղյան:

4։ ՈՒսումնավարժությանը ներգրավել՝

1) արտակարգ իրավիճակների հանձնաժողովին։

2) տարահանման հանձնաժողովին։

3) քաղաքացիական պաշտպանության ծառայություններին։

4) Արարատի մարզային փրկարարական վարչությանը։

5) Արտաշատ քաղաքի ղեկավար կազմին և Գետազատ, Դեղձուտ, Մրգանուշ, Լանջազատ, Վարդաշեն, Դիտակ, Բերդիկ, Աբովյան, Արևշատ, Դվին, Հնաբերդ, Ջրահովիտ, Այգեստան, Կանաչուտ, Դալար, Մրգավան, Ոստան, Ռանչպար, Նորամարգ, Արևաբույր, Հովտաշեն, Մրգավետ, Մխչյան, Նշավան, Արաքսավան, Մասիս, Բյուրավան, Դիմիտրով, Բուրաստան, Ազատավան, Բաղրամյան, Բերքանուշ բնակավայրերի վարչական ղեկավարներին:

5։ ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փ/ծ փոխգնդապետ Արսեն Աշոտի Ղուկասյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2023 թվականի մայիսի 4-ը ներկայացնել Արարատի մարզպետի հաստատմանը։

2) ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ ուսումնավարժության անցկացման հարցերով.

3) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված պաշտոնատար անձանց և ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի։

4) 2023 թվականի մայիսի 25-ին անցկացնել ուսումնավարժության փորձ"

5) ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել մայիսի 30-ին:

6։ ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) կազմակերպել «ՀՀ Արարատի մարզի բնակչության տարահանման», «ՀՀ Արարատի մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման» և «ՀՀ Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» պլանների ճշգրտումը:

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին։

3) գործնական միջոցառումների իրականացման համար համայնքային աղետների ռիսկի կառավարման ոլորտային խմբերին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

7. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.

2) գործնական միջոցառումների իրականացման ժամանակ խստագույնս պահպանել անվտանգության կանոնները.

3) ուսումնասիրել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

8.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Արարատի մարզպետին:

9. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս։ԹԵՎՈՆՅԱՆ